ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «13» 04 2022թ № 795-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N210-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի փետրվարի 10-ի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը 2022 թվականի ծրագիրը, 2022 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N210-Ա հրամանում (այսուհետ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածի 9-րդ կետի 4-րդ ենթակետում «դասընթացների կազմակերպմանը,» բառերից հետո լրացնել «,այդ թվում ՀՀ մարզերում 2 դասընթաց հյուրընկալության ոլորտի աշխատողների համար և 1 դասընթաց արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար» բառերը,

Scanned by TapScanner

2) Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետում «համագործակցություն,» բառից հետո լրացնել «միջազգային միջոցառումների (առնվազն 1), այդ թվում՝ ճանաչողական այցերի կազմակերպում» բառերը:

3) Հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածի 3"2-րդ կետի «Վերստուգելի չափանիշը» սյունակում «կազմակերպում» բառից հետո լրացնել «այդ թվում ՀՀ մարզերում 2 դասընթաց հյուրընկալության ոլորտի աշխատողների համար և 1 դասընթաց արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար» բառերը:

4) Հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածի 4.1.1 ենթակետի «Վերստուգելի չափանիշը» սյունակը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ «Միջազգային միջոցառումների (առնվազն 1), այդ թվում՝ ճանաչողական այցերի կազմակերպում»:

5) Հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Scanned by TapScanner

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2022 թվականի ----------ի ------ հրամանի
«Հավելված N3
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի
փետրվարի 10-ի N210-Ա հրամանիթ

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ				
«ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ		(հազար դրամ)		
h/h	ԾԱԽՍԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2022թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները առանց ԱՀՀ	ԱԱՀ	Ընդամենը 2022թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները
1	**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**	**110800.0**	**2960.0**	**113760.0**
1.1	**Մասնակցություն միջազգային հեղինակավոր առնվազն 3 զբոսաշրջային ցուցահանդեսներին**	**81000.0**	0.0	**81000.0**
1.2	**Հեղինակավոր առնվազն 3 պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում**	**15000.0**	0.0	**15000.0**
1.3	**Գովազդատեղեկատվական նյութեր**	**14800.0**	**2960.0**	**17760.0**
1.3.1	Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն և տպագրություն առնվազն 10000 հատ	13600.0	2720.0	16320.0
1.3.2	Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի սպասարկում	1200.0	240.0	1440.0
2	**ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ**	**30000.0**	**6000.0**	**36000.0**
2.1	Պետական աջակցություն ՀՀ մարզերում առնվազն 5 փառատոների կազմակերպմանը	30000.0	6000.0	36000.0
3	**ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**	**14500.0**	**2900.0**	**17400.0**
3.1	Պետական աջակցություն զբոսաշրջային առնվազն 5 տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը	10000.0	2000.0	12000.0
3.2	Զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման առնվազն 3 դասընթացների կազմակերպում, այդ թվում	4500.0	900.0	5400.0
3.2.1	ՀՀ մարզերում 2 դասընթաց հյուրընկալության ոլորտի աշխատողների համար	3000.0	600.0	3600.0
3.2.2	ՀՀ մարզերում 1 դասընթաց արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար	1500.0	300.0	1800.0
4	**Միջազգային համագործակցություն**	**28225.0**	**4615.0**	**32840.0**

4.1.1	Միջազգային առնվազն 1 միջոցառման կազմակերպում, (այդ թվում ճանաչողական այցերի կազմակերպում)	20800.0	4160.0	24960.0
4.1.2	Զբոսաշրջության ոլորտում համագործակցության երկկողմ և բազմակողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում	2275.0	455.0	2730.0
4.1.3	Արտերկրյա կազմակերպության միջոցով համաշխարհային համբավ վայելող մշակութային միջոցառմանը աջակցություն	5150.0	0.0	5150.0
	Ընդամենը	**183525.0**	**16475.0**	**200000.0**